# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

<< 24 >> 07 2013թ. N: 190-Ա **ք.Գյումրի**

<< ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՍՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<իա>> ենթակետի, 84-րդ հոդվածի 1-ին կետի <<իգ>>,<<իդ>> ենթակետերի դրույթներով.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

1.Հաստատել՝

1) <<Գյումրու Էնրիկո Մաստեի անվան պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2013 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ընկերության 2013 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ընկերության գործադիր տնօրենի վարձատրության չափը 2013 թվականի համար սահմանել մեկ հաստիքային միավորի համար ամսական 210000 դրամ:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է